Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 207-Ա որոշման

«Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 399-Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Վայոց ձորի մարզի Արենի համայնքի մանկապարտեզի կառուցում, որով կիրականացվեն համայնքի շուրջ 120 երեխայի կրթումն ու դաստիարակումը՝ բարեկարգ և լուսավոր պայմաններում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, պարտադիր վճարների, տուրքերի և այլ գծով արտոնություններից
3.	Բարեգործը	ՋիԷյՋէմ բարեգործական հիմնադրամ (հասցե՝ ԱՄՆ, 9701 Ուիլշայր ԲիԷլՎիԴի 1106, Բեվերլի Հիլս ՍիԷյ 90212)
4.	Ծրագիրը կատարողը	ՋիԷյՋէմ-Արմենիա զարգացման հիմնադրամ (հասցե՝ Բաղրամյան պող. 25, 61 սենյակ, Արաբկիր, Երևան, Հայաստանի Հանրապետություն, ՀՎՀՀ՝ 00235036)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Արենի բնակավայր, սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	1,266,589,390.77 դրամ

7.	Բարեգործություն ստացողը	Վայոց ձորի մարզի Արենի համայնք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի մայիսի 23-ից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) Վայոց ձորի մարզի Արենի համայնքի մանկապարտեզի կառուցում՝ 627,391,068.66 դրամ արժողությամբ: Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի մայիսի 23-ից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում: 2) Վայոց ձորի մարզի Արենի համայնքի մանկապարտեզին կից առանձնացված մասնաշենքի՝ դահլիճի կառուցում՝ 597,225,165.29 դրամ արժողությամբ, այդ թվում՝ մանկապարտեզի և դահլիճի շինությունների համալիր-ավարտական հարդարման աշխատանքների և ինժեներական համակարգերի, դուռ-լուսամուտների և վիտրաժների տեղադրում, հենապատի կառուցում, ընդհանուր տարածքի բարեկարգում և այլն: Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի ապրիլի 1-ից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում: 3) Վայոց ձորի մարզի Արենի համայնքի մանկապարտեզի շինարարական և մոնտաժային լրացուցիչ աշխատանքներ, այդ թվում հակահրդեհային-ազդանշանային համակարգի տեղադրում, մոնտաժում՝ 38,453,156.82 դրամ արժողությամբ: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի փետրվարի 16-ից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 30-ը: 4) Վայոց ձորի մարզի Արենի համայնքի մանկապարտեզի խաղահրապարակի համար մանկական համալիրի, պտուտակի մատակարարում և տեղադրում՝ 3,520,000 դրամ արժողությամբ: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի փետրվարի 8-ից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 30-ը:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) Վայոց ձորի մարզի Արենի համայնքի մանկապարտեզի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 627,391,068.66 դրամ: 2) Վայոց ձորի մարզի Արենի համայնքի մանկապարտեզին կից առանձնացված մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 597,225,165.29 դրամ: 3) Վայոց ձորի մարզի Արենի համայնքի մանկապարտեզի հակահրդեհային-ազդանշանային համակարգի իրականացում՝ 38,453,156.82 դրամ արժողությամբ: 4) Վայոց ձորի մարզի Արենի համայնքի մանկապարտեզի խաղահրապարակի համար մանկական համալիրի, պտուտակի մատակարարում և տեղադրում՝ 3,520,000 դրամ արժողությամբ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

26.03.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ